

(1905-Փետր. Հանդես Ամստերդամ 55). «Կորդուաց աշխարհն և ինչ որ նախկին Կորդուաց թագաւորութեանը կը վերաբերէր՝ նուաճելով Հայաստանի մաս ըրաւ Տիգրան մեծ , որ Բրիտտոսէ առաջ 69/ին ստիպուեցաւ այս երկիրները Ղուկուղղոսին թողուլ Կորդուաց Զարբիւննոս թագաւորը սպաննել տալէն ետքը : Ղուկուղղոսի հնուանալէն ետքը , Տիգրան Կորդուքը դարձեալ ձեռք անյուշ , բայց քիչ մը ետք ստիպուեցաւ նորէն զայն Պոմպէոսի տալ , որ 65/ին զայն Պարթևներէն առաւ և 64/ին նորէն Տիգրանին ետ տուաւ : Բրիտտոսէ ետքը 115/ին Տրայանոս կայսրը Կորդուքն առաւ , որուն Մանինարոս իշխանը Հայաստանի ինչ ինչ մասերն ու Միջագետքը յափշտակած էր :

Թեան ծանր , Ասորեստանցւոց վտանգ սպառնացող յարձակումները , քաղաքական հիմքը կը կազմեն Կուրնշուկի բնագիւղներուն մէկ շարքին , զորոնք կ'ըսուէին «Gebetean den Jonnengolt» տիտղոսին տակ հրատարակած է »

Նիզակակիցք իսկզբան յաջողութիւն ունեցան , և մարական—ասորեստանեայ սահմանին վրայ դանւող քանի մի տեղեր տուին , մինչեւ որ Գիւմեւերացւոց պարտութիւնն ընդ առաջնորդութեամբ Տիւշպայի (յամին 677) այս նիզակակցութիւնը թոյլցուց և հասունցուց դաշնադրութիւն մը Ասորեստանցւոց և Մարաց մէջ : Այս դաշնադրութիւնը կ'ընդունէր Մարական նիզակակցութիւնը : Հաւանականօրէն Մարերը վախցնելու և Ասորեստանցւոց դէմ թշնամական անագորոյն գործառնութիւններէ ետ կեցընելու դիտմամբ : »

(Բազմալիկ րիւ 5, 1904, երես 157)

(Երես 158). — «Բեւեռագիր արձանագրութիւնները մեզ կը ծանօթացընեն Մարական երկիրներու և քաղաքական անուններ մեծ բազմութեամբ : Մեր ծանօթութիւնները դեռ բաւական չեն այս անունները ըստ տեղւոյ խումբ խումբ բաժնելու » :

(Երես 218). — «Այն խօսքը թէ Մադախցիք Ասորեստանցւոց լուծը թօթափելով լեռները ու բացատտանները քաշուեցան և վրաններու տակ բնակուեցան , կրնանք սոյնպէս մը մեկնել որ առաջ Արեւմտքը կը բնակէին , ուստի Ասորեստանի մօտ : Սակայն կրնայ անիմաստ խօսք ալ ըլլալ , Մանդախցիք երբէք իրենքդիրենք Ասորեստանի հպատակ համարած պիտի չըլլան : Մանդախցիք Մարական ցեղ մըն էին :